
**ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՍԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՍԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵԶԸ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ. Մ.

Դեռևս վաղնջական ժամանակներից հնագույն ժողովուրդներն իմաստավորված նշաններ են փորագրել ժայռերին, ժայռաբեկորներին կամ մելանով գրել պապիրուսների, ինչպես նաև այլազան իրերի ու առարկաների վրա: Դրանց մասնագիտական ուսումնասիրությամբ զբաղվում են աղբյուրագետները, վիմագրագետները, պապիրուսագետները և գիտության տարբեր բնագավառների նեղ մասնագետները:

Հնագույն վիմական բնագրեր կարելի է համարել ժայռապատկերները՝ հայոց քարակերտ հանրագիտարանները, որոնցով այնքան հարուստ են հատկապես Գեղարքունիքի և Սյունիքի (մասնավորապես՝ Սիսիանի) լեռնազանգվածները: Դրանք թվագրվում են մ.թ.ա. VII-I հազարամյակներով: Բազմաթիվ ժայռապատկերներ խնամքով ընդօրինակվել, գրչագրվել և ակադեմիական հրատարակությամբ տպագրվել են Հ. Մարտիրոսյանի, Հ. Իսրայելյանի, Գ. Կարախանյանի և Պ. Մաֆյանի և այլոց ջանքերով: Հայտնաբերվել են ավելի քան 300 մեհենագրեր ու խմբաքանդակներ, որոնց զգալի մասը հետազայում իրենց արտացոլումն են գտել նաև միջնադարյան ձեռագիր մատյաններում: Թերևս նաև ժայռապատկերները նկատի ունենալով ֆրանսիացի գիտնական, մեծանուն հայագետ Անտուան Սեն-Մարտենը, երբ գրում էր. «Նրանց (հայերի - Գ. Գ.) պատմությունը քարերի և իրենց երկրի ժայռերի վրա գրված արձանագրություն է»¹:

Մ.թ.ա. IX-VI դդ. Հայաստանում սկսեցին կիրառվել սեպագրերը կամ բևեռագրերը՝ իրենց գրային տարբեր համակարգերով [միջազգային սեպագիր՝ ասուրական, տեղական ոճի սեպագիր՝ բիայնական (բուն հայկական), ինչպես նաև մեհենագրերն ու հիերոգլիֆները]: Դրանք շարունակում են ուսումնասիրվել մասնագետների կողմից նաև մեր օրերում:

Մ.թ.ա. II դարից, իբրև պաշտոնական գրագրության լեզու, Հայաստանում սկսեց կիրառվել արամեերենը կամ արամեական լեզուն, որը ծագումով պատկանում էր սեմական լեզվաընտանիքին: (Մեր հանրապետությունում արամեերենի մի բարբառով խոսում են ասորիները): Արամեերեն արձանագրություններ են հայտնաբերվել հատկապես Սևանա լիճը եզերող բնակավայրերում և Սիսիան-Գորիս մայրուղու ավազուտներում: Զանգեզուրյան սահմանաքարի արամեերեն արձանագրությունն, ի տարբերություն մյուսների, համեմատաբար ծավալուն է և ունի 9 տող, որտեղ հիշատակվում է Արտաշես արքայի անունից շնորհվող

¹ **Սեն Մարտեն Ա.**, Պատմական և աշխարհագրական հիշատակությունները Հայաստանի մասին, հ. 1-2, Վենետիկ, 1818-1819, էջ 38:

տիրույթի մասին²: Արամեական մյուս կոթողները հիմնականում սապատաձև քարեր են՝ դարձյալ նվիրատվական հակիրճ բովանդակությամբ: Այս արձանագրությունների մասին, կապված Արաշես արքայի անվան հետ, հատուկ նշում է պատմահայր Մովսես Խորենացին³:

Մաշտոցյան հայերենով վիմագրությունն առաջացել է V դ., գրերի գյուտից անմիջապես հետո: Պատմագիր Եղիշեն «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկում հատուկ նշում է, որ Ավարայրի ճակատամարտում զոհված հայորդիների աճյուններին հետագայում մահարձաններ էին կանգնեցվում, որոնց վրա փորագրվում էին պատերազմում նահատակվածների անունները. «Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»⁴:

Ավանդություն է պահպանվել այն մասին, թե ինչպես Աշոտ Ողորմած թագավորի վաղամեռիկ դուստր Հռիփսիմեն մահվանից առաջ հորը թախանձում է իր մասին հիշատակագրություն փորագրել քարի վրա, «Քանզի թուղթքն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարեայ արձանն անջինջ մնացէ յաւիտեան»⁵:

Հայր Ղևոնդ Ալիշանը համոզված էր, որ հայոց վիմագրերը «անխար հայելիք են հանճարոյ և ոգոյ նախնեաց մերոց»: Նա առաջարկում է անհապաղ հավաքել և գիտական պատշաճ մակարդակով հրատարակել այդ բնագրերը, որովհետև վիմագրերի մեծագույն մասը գտնվում է բաց երկնքի տակ՝ ենթակա տարերքի կործանարար ազդեցությանը, և տարիների ընթացքում քայքայվում, եղծվում և իսպառ ոչնչանում է՝ գիտության համար դառնալով ոչ պիտանի⁶: Հայկական վիմագրերի՝ իբրև պատմական կարևոր սկզբնաղբյուրների կարևորությունը հատուկ շեշտել են, ինչպես նշեցինք, պատմահայր Մովսես Խորենացին, Եղիշեն, Հովհան Մամիկոնյանը, ապա նաև Ստեփանոս Օրբելյանը (XIII դ.) և Զաքարիա Քանաքեռցին (XVII դ.):

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնահարցերով զբաղվող մասնագետները (Ն. Մառ, Հ. Օրբելի, Հ. Մանանդյան և ուրիշներ) իրավացիորեն կարծում են, որ առանց վիմագրերի հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի, մասնավորապես սոցիալական ոլորտի՝ հարկերի ու տուրքերի, ապահարկության, եկեղեցական տասանորդի, հավատացյալների հոգու փրկության համար կատարվող պատարագների ու դրանց գների մասին, աշխատավոր զանգվածների արտատնտեսական աշխատանքների բնույթի, սեփականության տարբեր ձևերի ու եղանակների վերաբերյալ:

² **Периханян А.** Арамейская надпись из Зангезура (Պատմա-բանասիրական հանդես, 1965, N 4).

³ **Մովսեսի Խորենացու** Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 186:

⁴ **Եղիշե,** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 203:

⁵ **Սմբատեանց Մ.,** Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ Տփղիս, 1904, էջ 424:

⁶ **Ղ. Ալիշան,** Միսական, Վենետիկ, 1893, էջ 164-165:

Վիմական արձանագրություններն իրենց բովանդակությամբ լինում են՝ Ա. հիշատակագրային, Բ. շինարարական, Գ. նվիրատվական, Դ. իրավականոնական, Ե. կրոնաբարոյախոսական, Զ. խառն⁷:

Հայկական գաղթօջախների արձանագրություններում, հատկապես հիշատակագրային բնագրերում (Լվովի, Կամենեց-Պոդոլսկի և այլ վայրերի) շատ հետաքրքիր են հայկական տոհմանշանները, որոնցում երբեմն հանդիպում են նաև մեսրոպյան տառեր⁸:

Հայկական վիմագրերում կան բազմաթիվ գաղտնագրեր (թվագիր, գումարագիր, սյունակետագիր և այլն), առկա են լեզվաբանական իրակություններ, ինչպես՝ «աւ» երկբարբառը օ-ի վերածվելու կանոնի անտեսումը (գօակ-գաւակ, գօաթ-գաւաթ, օետարան-աւետարան), բառերի հապավման տարբեր եղանակներ ու ձևեր, որոնցում առավել ընդհանրական կիրառություն ունեն տերունական բառերը (ԱՕ – Աստուած, ՏԼ – Տէր, ՅՄ ՔՄ – Յիսուս Քրիստոս, ՍԲ-սուրբ և այլն, որոնք բառաբարդման կամ թեքման դեպքերում մնում են նույն կերպ (օրինակ՝ Աստուածատուր-Ասատուր-Ասցատուր-Ծատուր): Հապավված կամ համառոտագրված բառ-եզրույթների վրա, իբրև կանոն, դրվում է հորիզոնական գծիկ, որն ընդունված է կո- չել պատիվ, դուր կամ քաշ: Հետաքրքիր են անձանունների, տոհմ- անունների՝ ըստ երկրի ու բնակավայրի կրած փոփոխությունները, օտարամուտ եզրերի առկա ձևերը: Նկատելի է, որ եթե մինչև XVII դ., այսինքն՝ մինչև զանգվածային կաթոլիկացումը, լեհա- հայերը կրում էին իրենց ազգին բնորոշ անուն-ազգանուններ, ապա այդ շրջանից սկսած, աստիճանաբար ենթարկվելով ուժացման, իրենց ազգանուններին կցում էին կո(քո) կամ սկի և ուլիչ վերջավորությունները (Խաչքո, Կրեսքո, Չայկովսկի, Ժուլինսկի, Թորոսովիչ, Թումանովիչ, Վարդերեսովիչ, Մանուկիչ և այլն): Յազլովեցում ապրող Ավագյան գերդաստանի ժառանգները սկսեցին կոչվել Ավագովիչ, ապա նաև Ավագովսկի, իսկ կոմսությունն ընդունելուց հետո՝ Վակովսկի: Ծատերը, հատկապես մտավորականները, վանական միաբանությունների անդամները, քահանաները (քայոնձները), մեծահարուստ ազնվականներն սկսեցին գրվել հայերենին մինչ այդ խորթ Սադոկ Բարոնչ, Կայտան Կայտանովիչ, Խրիստոֆոր Բեռնատովիչ, Ռոշքա, Ռոմաշքան, Մարմարոշ և այլն: Լեհական բանակի հայազգի զեներալ-լեյտենանտ Յան-Դավիդի ժառանգները հետագայում գրվեցին Յան դր Վիտտե, Դր Վիտտե, Վիտտե, Վիտ: Կարծում ենք՝ այս տոհմից էր ռուսական կայսրության սոցիալ-տնտեսական վերափոխումների մեծանուն բարեփոխիչ, կոմս Սերգեյ Յուլիչ Վիտտեն, որի գործունեությունը շատ բարձր է գնահատել ականավոր ռուս պատմաբան, ակադեմիկոս Եվգենի Վիկտորովիչ Տարլեն⁹:

⁷ Գրիգորյան Գր., Հայկական վիմագրություն, Ե., 2000, էջ 67:

⁸ Նույն տեղում, էջ 70-71:

⁹ Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Ե., 1985, էջ 593:

Վիմակյան արձանագրությունների տվյալներով՝ մոլորվահայերից ոմանք սկսեցին գրվել Կահինա, Բայիոզ, Նեզրուշ և այլ ազգանուններով, իսկ ռուսական միջավայրում Աստվածատուրը դառնում է Բոզդան (Արևելյան Եվրոպայի հայկական վիմագրերում՝ Թեոդոր), Մկրտիչը՝ Նիկիտա, Կարապետը՝ Կարպ, Հովհաննեսը՝ Իվան, Լուսեղենը՝ Լուկիան և այլն: Ձորավար Ա. Սուվորովի զինակից հայազգի գեներալ Եկիմ (Ակիմ) Վասիլնիչ Խաստատովի՝ Ս. Պետերբուրգում գտնվող հուշակոթողի հայերեն վիմագրում գրված է՝ «Յովակիմ Բարսեղի Խաստատեան»:

Առանց ուղեկցող հայերեն նյութերի շատ դժվար է կռահել, որ Ռուսաստանի խոշոր կապիտալի ներկայացուցիչներ Իվան և Վասիլի Մակարովները, Դավիդ Գրիգորևը, Բոզդան Բոզդանովը, Սերգեյ Իվանովը, Մաքսիմ Ֆիլիպովը, Պյոտր Իվանովը ազգությամբ եղել են հայեր: Ղրիմահայ արձանագրություններում թուրք-թաթարական տիրապետության ժամանակ մի շարք անձնանուններում առավելապես XVII դարից յան վերջածանցը երբեմն փոխվում է օղլուի՝ Խալաճեան-Խալաճօղլու, Արաբեան-Արաբօղլու, Ճերմակյան՝ Ճերմակ-օղլու և այլն: Ղրիմի թերակղզում ապրող հայ ազգաբնակչությունը զանգվածորեն ընդունում է արական՝ Խրտրըշահ, Խուտլուբեյ, Սովինչպեկ, և իզական՝ Անապիբե, Խանիպիբե, Խանմելիբ, Պիաթա անձնանունները:

Հայոց վիմագրերում անձնանունների խայտաբղետ պատկեր ենք տեսնում հատկապես օտարազգի նվաճողների՝ պարսիկների, արաբների, սելջուկ-թուրքերի և մոնղոլների ներխուժումների շրջանում: Նույնը կրկնվում է նաև Խորհրդային Միության տարիներին՝ Ռադիկ, Սլավիկ, Մելսիկ, Լենդրոշ (Լենդրոշ) և այլն:

Կերտման առումով վիմագրերը լինում են՝ փորագիր, ուռուցիկ կամ ելնդավոր և մելանագիր:

Հայաստանի Հանրապետության ներկա տարածքում հայերենից բացի հայտնաբերվել են՝ հունարեն, լատիներեն, արաբերեն, արաբատառ պարսկերեն, մասամբ նաև վրացերեն, իսկ հայկական գաղթավայրերում (օրինակ՝ Լվովում)՝ նաև հայատառ դիպչադերեն արձանագրություններ:

XIV-XV դդ. հանդես են գալիս վիմագիր բանաստեղծությունները, որոնցով հարուստ են հատկապես հայ գաղթավայրերի վիմակյան բնագրերը:

Ահա Ղրիմի Հրեշտակապետաց եկեղեցու հանգավոր վիմագրերից մեկը.

ՍԱ Է ՏԱՃԱՐ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ / ՇԻՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ԶՕՐԱՅ ՎԵՐԻՆ /
 ԳԱԲՐԻԷԼԻՆ ԵՒ ՄԻՔԱՅԵԼԻՆ / ՍՊԱՍՕՈՐՔ ԱԱՍՏՈՒԱԾ ԲԱՆԻՆ / ՀԱԼԱԼ
 ԱՐԴԵԱՄԲՔ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԻՆ ԿՈՂԱԿՑԻՆ ԱՂՈՒԹ ԽԱԹՆԻՆ / ԵՒ ԾՆՈՂԱԾ
 ՍԱՍԱԹԻՆ ՄԱՐԵՄ ԽԱԹՆԻՆ / ԵՒ ԶՕԱԿԱՑՆ ԽԱԶԱՏՐԻՆ ՄԻՄԷՈՆԻՆ /
 ՅՈՂԱՆԻՍԻՆ, ՄԱՐԻ ՄԵԼԻՔԻՆ. :ՊԾԷ: /1408/:¹⁰:

¹⁰ Դիվան հայ վիմագրության, պրակ 7, կազմեց Գր.Մ. Գրիգորյան, Ե., 1996, էջ 25:

Առանձնապես հետաքրքիր են վիմագրերի թվագրման եղանակները: Ի դեպ, այն բնագրերը, որոնցում չկան թվագրություն ցույց տվող տառեր, փորագրության ժամանակը որոշվում է տառանիշների հնագրական առանձնահատկությունների, ինչպես նաև պատմական դեմքերի և իրադարձությունների վկայությունների առկայության միջոցով: Մեր վիմագրական մատենաշարի հատորներում բազմաթիվ նյութեր կան ամբարված հայոց թագավորների, ազնվական – իշխանական տների, պատերազմների ժամանակ զոհված հայորդիների, գերեվարվածներին փրկագնով ազատելու նպատակով հանգանակություններ կազմակերպելու (Վայոց ձոր) բնական աղետների (երկրաշարժեր), համաճարակների և այլնի մասին: Վահանավանքի 40-ամյա պեղումների ընթացքում հայտնաբերված ավելի քան 70 նորահայտ վիմագրերից առավել կարևոր են արքունական դամբարանի և վանահայրերի հիշատակագրությունները:

Վահանավանքում իրենց հանգիստն են գտել Սյունիք աշխարհի շատ արքաներ ու իշխանագուհիներ և բարձրաստիճան հոգևորականներ: Մմբատ Բ-ն [որդի Աշոտի (Աշոտկայ)] Սյունիքում գահակալել է [(1040-1051 թթ.), Վասակ թագավորից (998-1040 թթ.) անմիջապես հետո]: Սա այն Վասակն է, որի դուստրը՝ հայոց թագուհի Կատ-րանիդեն ավարտին հասցրեց Անիի մայր տաճարի կառուցումը: 1040 թ. Դվինի Աբուլ Սուար ամիրան հարձակվեց Հյուսիսային Հայաստանի, այն է՝ Լոռու Կյուրիկյան թագավորության վրա՝ փորձելով իրեն ենթարկել Դավիթ Անհողին թագավորին: Մմբատ Բ-ն, Հովհաննես-Մմբատ Բագրատունի թագավորի աջակցությամբ, 2000-անոց այրուձիով ջախջախեց Աբուլ Սուարի զորքերը և արտաքսեց Լոռուց: Կարծում ենք՝ այստեղ էլ Մմբատն ամուսնանում է Դավիթ Անհողինի դուստր, Սյունյաց ապագա թագուհի Հրանուշի հետ, որը նույնպես թաղված է Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում, Մմբատի կողքին: Նրա տապանաքարին փորագրված է՝ ՀՆԱՆՈՇ: Ստեփանոս Օրբելյանը հպարտությամբ է ներկայացնում Մմբատ Բ Սյունյաց թագավորին: Նա, գրում է պատմիչը, ահարկու էր «շրջակա ազգերի» (իմա՝ սելջուկ-թուրքերի) համար¹¹:

Մմբատ Բ-ի կողքին է հանգում նրա կրտսեր եղբայր Գրիգոր Ա. թագավորը, որն ամուսնացած էր իշխանագուն Սահակ Սևադայի դուստր Շահանդուխտի հետ: Ըստ տապանագրի, Գրիգոր Ա-ն մահացել է հայոց ՇԻԱ(1072) թվականին: Ցավոք, ոչ Մմբատը և ոչ էլ Գրիգորը զավակներ չեն ունեցել: Սյունիքի իշխանների որոշմամբ, թագավոր է հռչակվում Սահակ Սևադա Կրտսերի որդին՝ «հանճարեղ և իմաստուն» պատանի Սենեքերիմը¹²: Նկատենք, որ եթե Սյունիքի նախորդ թագավորները երկիրը պաշտպանում էին հատկապես զորական ուժով, ապա, իրավիճակի թելադրմամբ, Սենեքերիմը դիմում է նաև դիվանագիտական քայլերի: Նա մտերիմ հարաբերություններ է հաստատում սուլթան Մելիք Շահի հետ և կարողանում է

¹¹ Ստեփանոսի Օրբելեանի Պատմություն տանն Սիսական, Մ., 1861, էջ 233:

¹² Նույն տեղում:

ոչնչացնել իր բոլոր՝ համեմատաբար թույլ, սակայն Սյունիքի համար առավել փտանգավոր, մերձակա սուլթանիկներին: Մենեքերիմը ճկուն դիվանագիտության շնորհիվ ընդարձակում է Սյունյաց թագավորության սահմանները: Մելիք Շահի մահից հետո՝ 1092 թ., Մենեքերիմն անհավասար պայքար է մղում սելջուկ-թուրքական միացյալ զորքերի դեմ: Բաղաբերդում ճակատամարտին պատրաստվող Սյունյաց արքան իզուր է լսում Անիի Գրիգոր Ապիրատյան իշխանին՝ իբրև թե թուրք ամիրան ցանկանում է խաղաղ բանակցություններ վարել և հաշտություն կնքել Սյունյաց տիրակալի հետ. առաջին իսկ հանդիպման ժամանակ Սյունյաց արքան նենգաբար սպանվում է: Նրա դիակը հարազատները տեղափոխում են Վահանավանք և հողին են հանձնում «ընդ այլ թագաւորսն»: «Ահա այսպէս շիջաւ ճրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրսն Բաղաց»¹³, - գրում է Սյունյաց պատմիչը: Շրջակա ավարառու ցեղախմբերը խանդով էին նայում օրավոր հզորացած Բաղաց թագավորությանը, «գոր խոչ մեծ համարէին ինքեանց»¹⁴:

Մենեքերիմ արքայի մահից հետո գահակալում է նրա ավագ որդի Գրիգորը [Գրիգոր Բ Սյունյաց թագավոր (+1166), «Նվաղ և ընդ աղօտ թագաւորեալ»]¹⁵:

Վահանավանքում շինարարական ծավալուն աշխատանքներ է կատարել Սյունյաց թագուհի Շահանդուխտ Բ-ն՝ Իր քույր Կատայի հետ, որին Ստ. Օրբելյանը կոչում է «սրբասնունդ օրիորդ». նրանք կառուցել են Վահանավանքի երկհարկանի դամբարան- եկեղեցին, որն այսօր վերականգնվել է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի որդի Յուլի Թամանյանի նախագծով:

Շահանդուխտի մայրը՝ Սուփի թագուհին նույնպես թաղված է Վահանավանքի գլխավոր եկեղեցու սյունասրահում: Նրա տապանաքարին կարդում ենք՝

ՍՈՓԻ ԱՂՎԱՆԻՑ ԹԱ / ԳՈՒՀԻ, ԶՈՔԱՆՉ ԳՐԻԳՈՐ / ԹԱԳԱԻՈՐԻ՝ ՈՐԴՈ ԱՇՈՐԿԱ, ՄԱՅՐ ՇԱ / ՀԱՆԴԽՏՈ. ԹՎ / :ՇԼ: /1081/¹⁶:

1046 թ. Վահանավանքում կատարվում են մեծ ծավալի վերականգնման աշխատանքներ: Կազմակերպիչը եղել է Գրիգոր Ա Սյունյաց ապագա թագակիրը, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Սյունյաց իշխանաց իշխանի պաշտոնը: Սյունասրահի հարավային պատին՝ արտաքուստ, երկու մեծ սալաքարերի վրա փորագրված է՝

ԹՎ. ՆՂԵ (1046) / ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ԱԾ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱԻՈՐԻ / ԵԻ ԻԻՐ ԵՂԲԱԻՐՆ ԳՐԻԳՈՐՈ՝ ՇԻՆՈՂԻ ՍԲ ԵԿ / ԵՂԵՑԻՈ, ՍՐԱՀԻՍ ԵԻ ԺԱՄԱՏԱՆՆ.ՈՐՔ ՄՏ / ԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԶՍՈՑԱ ՅԱՂԱԻԹՍ ՅԻ / ՇԵՑԷՔ¹⁷:

Վահանավանքում են հանգչում Սյունիքի ականավոր գործիչներ և կրոնավորներ, ինչպես՝ իշխանաց իշխան Աշոտը (Աշոտիկը)՝ Վասակ թագավորի

¹³ Նույն տեղում, էջ 235:

¹⁴ Նույն տեղում, էջ 234:

¹⁵ Գրիգորյան Գր., Վահանավանք, Ե., 2007, էջ 59:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 47-48:

քեռայրը, Սմբատ Բ և Գրիգոր Ա թագավորների հայրը, Դինար թագուհին, գահակալ իշխան Ջևանշերը՝ Վահանավանքի հիմնադիր Վահանի եղբայրը և կաթողիկոս Վահան Առաջին Սյունեցու հայրը և այլ իշխանագույններ: Մինչև օրս չեն հայտնաբերվել Մենքերիս թագավորի և Շահանդուխտ թագուհու գերեզմանները:

Մեր քարակերտ մատյաններում կան բազմաթիվ իմաստալից արտահայտություններ, թևավոր խոսքեր, ինչպես, օրինակ՝ Ըստ գործոց ձերոց եղիցին ձեզ, Յորժամ բանքն սպառին և գործքն թագաւորեն, Մահկանացու ծնեալ անմահ զիրն յիշատակ էթող, Մատանի էր անակն Վայոց ձոր, Շինեցի զսա և եղի ակն ի վերայ:

Հայկական վիմական արձանագրությունները նույն պատմամշակութային արժեքն ունեն, ինչ մատենագրական սկզբնաղբյուրները, սակայն էթե ձեռագիր մատյանները գտնվում են պետության հոգածության ներքո, ապահով շենքերում, ցուցասրահներում, ապա քարակերտ մատյանները, ցավոք, անմխիթաբ վիճակում են և օրեցօր ոչնչանում են մեր աչքից հեռու, նաև մեր աչքի առաջ: Պետք է փրկել այդ սրբազան մատուները, պահպանել մեր ազգային հարըստությունն ու փոխանցել հետագա սերունդներին:

ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ АРМЯНСКИХ ЛАПИДАРНЫХ НАДПИСЕЙ

ГРИГОРЯН Г. М.

Резюме

К древнейшим лапидарным надписям можно отнести наскальные изображения, которыми богато Армянское нагорье. В IX–VI веках до нашей эры в Армении использовалась Ванская (урартская) клинопись, а со второго века официальным межгосударственным языком являлся арамейский, о чем свидетельствует патриарх армянской историографии Мовсес Хоренаци. Самая пространная надпись из 9-ти строк была выявлена в начале 60-х годов при строительстве автомагистрали Сисиан-Горис.

После создания Месропом Маштоцем армянской письменности лапидарные надписи стали высекать и на камне, о чем упоминают историки золотого века Мовсес Хоренаци, Егише и другие.

Согласно историку 13-го столетия Степаносу Орбеляну, лапидарные надписи во многом способствуют целостному освещению истории армянского народа.